

**ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ և ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ
ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԲԿԳԿ-ԲՄԱՊՁԲ-25/53**

ք.Երևան

«06» 03 2026թ.

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն ի դեմս գլխավոր քարտուղարի պ/կ՝ Կ. Ղարիբյանի, ով գործում է Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Կոնցեռն-էներգոմաշ» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Բ. Թադևոսյանի, ով գործում է «Կոնցեռն-էներգոմաշ» ՓԲԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Ձննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լինի՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 338,797,500.00 (երեք հարյուր երեսունութ միլիոն յոթ հարյուր ինսունյոթ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Պայմանագրի գնից՝ մինչև 101,639,250.00 (մեկ հարյուր մեկ միլիոն վեց հարյուր երեսունինը հազար երկու հարյուր հիսուն) ՀՀ դրամը, Գնորդը փոխանցում է Վաճառողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Վաճառողին վճարումներ չեն կատարվում: Վաճառողը կարող է հրաժարվել առաջարկված

կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում կնքվելիք պայմանագրում կանխավճարը սահմանվում է Գնորդի և Վաճառողի միջև համաձայնեցված չափով:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան հանձնման-ընդունման արձանագրության երկկողմ հաստատման տարվա դեկտեմբերի վերջին աշխատանքային օրը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում գնորդը վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը: Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև. ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱՖՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի

օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Վաճառողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 431-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում գնորդը վճարումներն իրականացնելիս ապահովի վաճառողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում գնորդը պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է գնորդի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

8.13 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.14 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.15 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի


ՀՀ, ք. Երևան, Օրբելի 22

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Հ/Հ 900011045565

ՀՎՀՀ 02704199

Գլխավոր քարտուղարի պ/կ՝


Կ. Նալբանդյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

«Կոնցեռն-էներգոմաշ» ՓԲԸ


ք. Երևան, Ազատության 26/8

Ամերիաբանկ ՓԲԸ

ՀՀ 1570011489540100

ՀՎՀՀ 01210095

Տնօրեն՝


Ք. Թադևոսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ապրանքի											
Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	Ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մոդելը և արտադրողի անվանումը*	Տեխնիկական բնութագիրը	Չափման միավորը	Միավոր գինը/ՀՀ դրամ	Ընդհանուր գինը/ՀՀ դրամ	Ընդհանուր քանակը	Մատակարարման		
									Հասցեն	Ենթակա քանակը	Ժամկետը
1	35121341/508	Քվանտային օպտիկայի համալիր հավաքածու	Compact standalone Compact standalone closed-cycle CRYOSTAT Time Tagger Ultra 4 channel System ID281-CO-8 channel continuous Operation Cryogenic System ID1000-Master Spectrometer CCD model IHR550VIS-NIR 400nm -1.65 um PDL 800-D Diode laser driver for picosecond pulser ATTOCUBE Systems AG, Germany SWABIAN Instruments GmbH, Germany ID Quantique SA, Switzerland	Տեխնիկական բնութագիրը ներկայացվում են ստորև, Հավելված 1.1-ով:	լրակազմ	338,797,500.00	338,797,500.00	1	Ք. Երևան 0014, Պ. Սևակի փ. 5/2	1	Կողմերի միջև կնքվող Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո, սահմանելով, որ մատակարարումն իրականացվելու է 9 ամսվա ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ ապրանքի մատակարարը համաձայն է ավելի շուտ ժամկետներում մատակարարել


			ID Quantique SA, Switzerland HORIBA FRANCE SAS, France PICOQUANT GmbH, Germany								
--	--	--	--	--	--	--	--	--	--	--	--

*Եթե ընտրված մասնակցի հայտով ներկայացվել է մեկից ավելի արտադրողների կողմից արտադրված, ինչպես նաև տարբեր ապրանքային նշան, ֆիրմային անվանում և մոդել ունեցող ապրանքներ, ապա դրանցից բավարար գնահատվածները ներառվում են սույն հավելվածում:

ԳՆՈՐԴ

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի
ՀՀ, ք. Երևան, Օրբելի 22
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011045565
ՀՎՀՀ 02704199

Գլխավոր քարտուղարի պ/կ՝


Կ. Ղարիբյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

«Կոնցեն-Էներգոմաշ» ՓԲԸ
ք. Երևան, Ազատության 26/8
Ամերիաբանկ ՓԲԸ
ՀՀ 1570011489540100
ՀՎՀՀ 01210095

Տնօրեն՝


Բ. Թադևոսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Քվանտային օպտիկայի համալիր հավաքածու

Քվանտային օպտիկայի համալիր հավաքածու

Փակ շղթայով կրիոստատ, ինտեգրված օպտիկական սեղանի մեջ՝ նախատեսված քվանտային օպտիկայի և քվանտային օպտոմեխանիկական փորձերի համար

Ընդհանուր համակարգը բաղկացած է կրիոստատից, վակուումային պոմպից, ինտեգրված օպտիկական սեղանից, վակուումային գլխիկից և լրացուցիչ պարագաներից (տես նկարը):



Կրիոստատ

Նմուշը հանելու/փոխելու համար հեշտ հանելու հնարավորություն՝ վակուումային պաշտպանիչ փականի/գլխիկի (shroud) հեռացման միջոցով

Նմուշի համար նախատեսված միջավայրը՝ կրիոգենային վակուում

Նմուշի համար նախատեսված տարածքը (տրամագիծ)՝ 80 մմ

Սառը հարթակի (plate) գերցածր վիբրացիաներ՝ <5 նմ (ուղղահայաց, ծայրից ծայր (peak-to-peak) @1490-1510 Հց)

Ցածր ջերմաստիճանի միջակայքը՝ 3.8 ... 320 Կ

Հիմնական ջերմաստիճանի ստաբիլությունը՝ 8-10 մԿ (ծայրից ծայր (peak-to-peak) տատանումները մարող նմուշի ամրակով)

Հիմնական ջերմաստիճանից մինչև 300Կ ջերմաստիճանի կայունություն՝ 65-75 մԿ (ծայրից ծայր (peak-to-peak) տատանումները մարող նմուշի ամրակով)

Սառեցման հզորությունը 5 Կ-ի դեպքում՝ >170 մՎտ

Սառեցման ժամանակը՝ <4.5 Ժ մինչև 5 Կ (ներառյալ մղման ժամանակը՝ կախված ջերմաբեռնվածությունից)

Նմուշային խցիկի հիմնական ճնշումը՝ <5×10⁻⁶ մբար

Արտահոսքի արագությունը՝ <5×10⁻⁹ մբար /վ

36-38 էլեկտրական կոնտակտներ նմուշային տարածքի համար (ջերմակայունացված @4-4.2 Կ)

Ամբողջությամբ ավտոմատացված ջերմաստիճանի հսկողություն (վակուումային, սառեցում/տաքացում, ջերմաստիճանի կառավարում)

USB ինտերֆեյս՝ հեռակառավարման համար համակարգչի միջոցով:

Օպտիկական սեղան



Չափսերը (Լայնություն x երկարություն)՝ 1200-1250 մմ x 2100-2200 մմ

Սեղանի հաստությունը՝ 300-310 մմ

Սեղանին տարբեր էլեմենտների մոնտաժման/ամրացման համար նախատեսված անցքերը՝ մետրիկական (M6-1.0 անցքեր 25 մմ ցանցի վրա, 12.5 մմ եզրագծերով)

Օպտիկական սեղանի ոտքերը ներառված են հետևյալ պարամետրերով.

4 ստանդարտ վիբրացիաները մարող, բարձրությունը 590-600 մմ, ավտոմատ վերահավասարեցմամբ/re-leveling

սեղանի մեջ կրիոստատի բնութագրերին համապատասխանեցված անցք համապատասխան հատկանիշներ

(փոխարինում է կանխադրված/ default օպտիկական հարթակը՝ 900-950 մմ x 1800-1850 մմ չափերով):

Վակուումային գլխիկ սենյակային ջերմաստիճանում գտնվող արտաքին՝ աշխատանքային կարճ հեռավորությամբ և բարձր թվային ապերտուրայով օբյեկտիվի հետ օգտագործման համար

Վակուումային փականային գլխիկը ունենա նկարում բերված կառուցվածքը (տե՛ս նկարը):



1.Վակուումային գլխիկ սենյակային ջերմաստիճանում գտնվող օբյեկտիվի հետ օգտագործման համար. նվազագույն աշխատանքային հեռավորությունը պատուհանը ներառյալ < 2 մմ; նվազագույն աշխատանքային հեռավորությունը առանց պատուհանի < 2 մմ

2.Սառը պաշտպանիչ պատյան կափարիչով, որը կարգավորվում է ըստ նվազագույն աշխատանքային հեռավորության

3.Վակուումային վերին պատուհան, 24-26 մմ x 0.4-0.6 մմ, սապֆիր

4. Սառը պատյանի վերին պատուհան, 12.5-13 մմ × 0.37-0.38 մմ, սապֆիր

5. Սառը թիթեղ

6. Դիրքավորիչներ (positioners) + ջերմային կապ ինտեգրված Si դիոդով և տաքացուցիչով + պիեզոէլեկտրական Ti սկաներ (առավելագույն տեղադրման տարածք՝ 24-25 մմ × 24-25 մմ; 10-12 մմ), որը հնարավորություն է տալիս բարձր ճշգրտությամբ XY-սկանավորում լայն տիրույթներում, նույնիսկ կրիոգենային ջերմաստիճաններում:

7. Նմուշակիր, որը համատեղելի է կրոստատի տարրերի հետ:

8. Նմուշակիր՝ 12 էլեկտրական կոնտակտով, միացված ոլորված զույգ մետաղալարերով:

9. 3-9.35 մմ × 30 -32մմ & 60-65 մմ × 60-65 մմ վանդակաճաղային համակարգի (cage system) կցման թելքեր, կենտրոնացված վերին պատուհանի շուրջ: Ներառված են 4h. վանդակաճողերի ամրացման ադապտերներ՝ հեշտ և արագ տեղադրման ու հեռացման համար:

10. փոխանցման օղակ՝ կույր եզրերով:

AR-ծածկույթով պատուհաններ վակուումային պատյանի համար.

- Ծածկույթ՝ 400 - 1000 նմ տիրույթի համար

- Միջին անդրադարձումը (R avg.) <1.5% @ 400 - 1000 նմ:

Ջերմային միացման սարք

- Ինտեգրված կալիբրացված Cernox ջերմաստիճանի սենսորի և տաքացուցչի հետ

Սենսոր

- Ջերմաստիճանի միջակայք՝ 1.4 Կ - 325 Կ

- Կալիբրացված ճշգրտություն՝ ±5 մԿ 4.2 Կ-ում

- Վերարտադրելիություն՝ ±3 մԿ 4.2 Կ-ում

- Առաջարկվում է օգտագործման համար մագնիսական դաշտերում՝ ցածր ջերմաստիճանների դեպքում

- Տաքացուցիչ

- Նյութ՝ SMD տաքացուցիչ

- Դիմադրություն՝ 50-55 Օհմ (նոմինալ)

- Ուժի սպառում՝ 5-5.5 Վտ

- Հոսանք՝ 0.3-0.35 Ա

Նմուշի ջերմային ամրացում՝ քուլֆինգրի միջոցով՝ պղինձից պատրաստված թերթիկների միջոցով

Համատեղելի կրիոստատի սկաների և դիրքավորիչների հետ

Պատրաստված է ոսկեպատ պղնձից

Երկարություն՝ 80-85 մմ:

AAP Հեռավորության թիթեղների հարմարեցված հավաքածու

Հարմարեցված 7-7.5 մմ և 4-4.5 մմ հաստությամբ հեռավորության սիեյսերներ սկաների համար ջերմային միացման սարքում տեղադրման համար

Նաև դիրքավորիչների գործիքների հավաքածու վակուումային ANB200-ով

Լրացուցիչ պարագաներ (Տիտանիումի սեղմիչներ, մալուխներ, պտուտակային միակցիչներ և այլն)

RES մալուխների գործիքների հավաքածու

Ներառում է ճկուն կառավարման մալուխ (երկարություն՝ 20-25 մ)

- Ներառում է D-Sub, size A, 26 pin միակցիչներ

Ներառում է լրացուցիչ պարագաներ կրիոստատի տարրերի հետ համատեղելի:

8-կանալային անընդհատ աշխատանք ապահովող կրիոգենային համակարգ

Կրիոգենային համակարգ

Փակ շղթայով կրիոգենային համակարգ, որը նախատեսված է 8 կանալ/դետեկտոր տեղակայելու համար՝ ներառյալ սառցաշղթան (coldhead), կոմպրեսորը և ջերմաստիճանի վերահսկման համակարգը: Ցանկացած պահի հեշտությամբ ընդլայնվում է մինչև 16 կանալ:

Անկախ <3.0 Կ շարունակական աշխատանք ապահովող կրիոստատ:

Պարունակում է՝

- Մանրաթելային օպտիկական (FC/PC) և RF միակցիչների (SMA) վահանակ
- Համատեղելի կառավարման տուփ
- Համատեղելի ջերմաստիճանի վերահսկման համակարգ
- Համատեղելի կառավարման ծրագրային ապահովում
- Օպտիկական մանրաթելերի մաքրման հավաքածու և օգտագործման փաստաթղթեր

Ջրով հովացվող կոմպրեսոր - 220-225V

Ներքին՝ ջրով հովացվող կոմպրեսոր

6-6.5 մ երկարությամբ մալուխ և ճկուն խողովակ՝ ջրային կոմպրեսորի համար

6-6.5 մ երկարությամբ մալուխի սառեցնող գլխիկի մալուխների և ճկուն խողովակների հավաքածու ջրով հովացվող կոմպրեսորի համար:

Գերհաղորդիչ նանոլարային միաֆոտոնային դետեկտոր (SNSPD) և համապատասխան պարագաներ

Իրական լատչիզ (Latch-free) ազատ աշխատանք (չի պահանջում վերագործարկման մեխանիզմ)

Դետեկտորների բնութագրերը

4 հատ N-CO դետեկտոր

• Համակարգի հայտնաբերման արդյունավետություն (SDE): 85%-90% (կամ ավելի) 850-860 նմ-ում (780-900 նմ լայնաշերտ ռեզոնատոր, 780-HP մանրաթել, FC-PC միակցիչներ)

• Մութ հաշվարկների հաճախականություն (DCR): < 5 ցավ (~ 1 ցավ բնորոշ)

• Ժամանակային ջիթերի հիստոգրամայի FWHM արժեք (ps): < 40 ps

• Ժամանակ (ns), որ անհրաժեշտ է համակարգի հայտնաբերման արդյունավետությունը (SDE) մինչև իր նոմինալ արժեքի 50%-ը վերականգնելու համար (RT): < 30 ns

• Դետեկտորի դաս: B

2 հատ N-CO ցածր DCR ունեցող դետեկտոր

• Համակարգի հայտնաբերման արդյունավետություն (SDE): 85%-90% (կամ ավելի) 1550-1560 նմ-ում (SMF-28 մանրաթել և FC-PC միակցիչներ)

• Մութ հաշվարկների հաճախականություն (DCR): < 10 ցավ

• Ժամանակային ջիթերի հիստոգրամայի FWHM արժեք (ps): < 40 ps

- Ժամանակ (ns), որ անհրաժեշտ է համակարգի հայտնաբերման արդյունավետությունը (SDE) մինչև իր նոմինալ արժեքի 50%-ը վերականգնելու համար (RT): < 40 ns

- Դետեկտորի դաս: A+

Լրացուցիչ բնութագրեր

- Կողմնակի հոսանքի կարգավորում. բոլոր դետեկտորները կալիբրացված են միակողմանի հոսանքի արժեքի վրա, որի դեպքում կատարման բոլոր բնութագրերը միաժամանակ ապահովված են:

- Իրական լատչից ազատ աշխատանք. բոլոր դետեկտորները չեն տառապում լատչինգի ազդեցությունից, ուստի վերագործարկման մեխանիզմ անհրաժեշտ չէ:

- Բոլոր FC-PC միակցիչները լայն բանալիով են:

Վակուումային պոմպ

Գործարկում և ուսուցում (հեռակա)

Հեռակա աջակցություն (ներառում է տեղադրման աջակցություն, գործարկում և ուսուցում):

Պիկովայրկյանային դիոդային լազեր

Ներառում է հետևյալ բաղադրիչները.

Դիոդային լազերային դրայվեր պիկովայրկյանական իմպուլսների համար

Ալիքի երկարության փոփոխությունը կատարվում է պարզապես այլ լազերային կամ LED գլխիկ միացնելով: Գեներացվող իմպուլսներ՝ մինչև 80 ՄՀց կրկնության արագությամբ, որոնք ստեղծվում են ներքին ցածր-ջիտեր (low-jitter) բյուրեղային գեներատորներով:

Երկու ներքին բյուրեղային գեներատոր՝ 80 ՄՀց և 1 ՄՀց, որոնք օգտվողը կարող է ընտրել:

Կրկնության արագության 2, 4, 8, 16 կամ 32 անգամ նվազեցման հնարավորություն՝ ապահովելով 80 ՄՀց-ից մինչև 31.25 կՀց արագություն:

Արտաքին ազդանշանով ցանկացած կրկնության արագությամբ աշխատելու հնարավորություն՝ սկսած առանձին իմպուլսներից մինչև 80 ՄՀց: Տեղեկամուտքը (trigger input) ընդունում է թե՛ դրական, թե՛ բացասական ազդանշաններ և ունի կարգավորելի շեմային մակարդակ (trigger level), որը հնարավորություն է տալիս օգտագործել տարբեր ծանր ունեցող իմպուլսներ:

Բոլոր գեներացված լազերային իմպուլսներն ունեն համաժամացման ելք (synchronization output), որը համաժամեցված է ազդանշանի աղբյուրի հետ և իդեալական է, օրինակ, ժամանակի հետ կապված մեկ ֆոտոնի հաշվարկի (Time-Correlated Single Photon Counting) սարքավորումների հետ համաժամեցման համար:

Լազերային ճառագայթման հզորության կարգավորում լազերային/LED գլխիկի ելքային հոսանքը պոտենցիոմետրով փոփոխման միջոցով:

Հիմնական բնութագրեր

-Անընդհատ (CW) աշխատանքային ռեժիմ համապատասխան լազերային գլխիկի դեպքում

-Իմպուլսային աշխատանքային ռեժիմ համապատասխան լազերային գլխիկի դեպքում

-12 ներքին կրկնության արագություն (31.25 կՀց - 80 ՄՀց)

-Արտաքին ազդանշանով կառավարում

-2 գեյթային մուտք (gating inputs)

-5 տարվա սահմանափակ երաշխիք:

Պիկովայրկյանային իմպուլսային և CW ռեժիմում աշխատող լազերային գլխիկ

Ալիքի երկարություն: 405 ± 10 նմ

Իմպուլսի տևողություն (FWHM): < 50 պիկովայրկյան

Առավելագույն կրկնության արագություն: 40 ՄՀց

Բարձր միջին հզորություն: 3.0 ± 2 մՎտ

Ցածր միջին հզորություն: 1.0 ± 0.2 մՎտ

Անընդհատ ռեժիմում հզորություն: 50.0 ± 2 մՎտՆերառում է: Կոլիմատոր և ջերմաստիճանային կայունացում, Կարող է աշխատել CW ռեժիմում
Փնջի պարամետրեր

Օպտիկական ֆոկուսի երկարություն: $f' = 4 \pm 0.5$ մմ

Թվային ապերտուրա (NA): 0.55 ± 0.02

Տիպային տարամիտում (divergence) օպտիկայով: Թեթագուգահեռ: ≈ 0.11 մրադ, թեթաուղղահայաց: ≈ 0.32 մրադ

Բևեռացում: զծային, ուղղահայաց էլիպսաձև փնջի երկար առանցքի նկատմամբ

Չափսեր: $60 \pm 2 \times 100 \pm 2$ մմ (տրամագիծ × երկարություն)

"F-տեսակ" (FC/APC կոնեկտոր): $200 \times 100 \times 35$ մմ (երկ. × լայն. × բարձր.)

Սպեկտրալ լայնություն՝ 2-8նմ

Մուլտիմոդային օպտիկամանրաթելային կուտակիչ/coupler ջերմաստիճանը կայունացված ՍՎ/կապույտ/կանաչ լազերային գլխիկների համար FC/APC միակցիչով

Մուլտիմոդային օպտիկամանրաթելային մալուխ Միջուկի տրամագիծ՝ 50 ± 2 մկմ, աստիճանաբար փոփոխվող ինդեքս (graded index), երկարություն՝ 4.0 մ, Ելքային կոնեկտոր՝ FC/APC

Մանրաթելային կոլիմատոր

FC/APC մանրաթելային միակցիչ

Ֆոկուսային հեռավորություն՝ $f = 11 \pm 0.1$ մմ

Հարմար է 370 - 600 նմ ալիքի երկարությունների համար

Համակենտրոնացնող բանալի/ Excenter key

Օգտագործվում է մանրաթելային Z-առանցքի ուղղությամբ կարգավորման համար:

CCD-ով սպեկտրոմետր

Պատկերավորող (Imaging) սպեկտրոմետրը ներառում է հետևալ բաղադրիչները.

Սպեկտրոմետրի հիմնական միավոր (Base Unit)

Արձաթապատ հայելիներով, կինեմատիկական եռակի դիֆրակցիոն ցանցերիի պտուտահաստոց (turret)՝ առանցքի նկատմամբ ցանցի պտույտով և միկրոքայլանի կարգաբերմամբ, ցանցերի պտուտահաստոց (ցանցերը ներառված են), Purge պորտ, USB մալուխ և հիմնական ծրագրակազմ:

Պահանջվում է 1 մուտքի ճեղք, 1 ելքի պորտ կամ 1 Դետեկտորի փական (Flange) և ցանցեր

300-305 գծ/մմ դասականորեն գծանշված դիֆրակցիոն ցանց 600-605 նմ-ի համար մեծ մակերեսով՝ 75-76x75-76 մմ, սպեկտրային տիրույթը՝ 350-1600 նմ (արդյունավետությունը >60% 420-900 նմ)

300-305 գծ/մմ դասականորեն գծանշված դիֆրակցիոն ցանց 1-1.1 մկմ-ի համար, սպեկտրային տիրույթը՝ 700-2000 նմ (արդյունավետությունը >60% 700-1500 նմ)

950-955 գծ/մմ բլեյզված հոլոգրաֆիկ ցանց 900-905 նմ-ի համար, սպեկտրային տիրույթը՝ 700-1700 նմ:

• Resolution Array ադապտեր JY CCD դետեկտորների և այլ Array-ների համար՝ նմանատիպ ամրացման պտուտակի ձև ունեցող:

Համակարգչով կառավարվող առջևի մուտքի ճեղք- փոխվում է 0-2 մմ 2 միկրոն քայլով:

Համակարգչով կառավարվող կողային մուտքի ճեղք- փոխվում է 0-2 մմ 2 միկրոն քայլով:

Շարժական բռնակին ամրացված (Motorized swing away) արձաթապատ հայելի մուտքի համար:

Շարժական բռնակին ամրացված (Motorized swing away) արձաթապատ հայելի ելքի համար:

Փականի կառավարման միավոր (Shutter Control Unit)

• Կառավարման միավորը նախատեսված է էլեկտրոմեխանիկական փականի ակտիվացման վերահսկողության համար, որպեսզի այն ճիշտ ժամանակին գործի, երբ սպեկտրոմետրի գիտական հայտնաբերման համակարգի CCD-ն ենթարկվում է լույսի ճառագայթման տակ:

Վերահսկիչ միավորի առանձնահատկությունները հետևյալն են.

Երկակի TTL կառավարման մուտքի արխիտեկտուրա, որն ապահովում է ճկունություն՝ թույլ տալով մեկ միավորի կառավարման համակարգի ճեղքի գործունեությունը, երբ կապված է մեկ կամ երկու դետեկտորների (օրինակ՝ CCD և IGA) հետ՝ բազմաբարձր ելքային պորտերով սպեկտրոմետրի վրա:

Փականի անջատման ֆունկցիա, որը թույլ է տալիս ձեռքով շտկել (անընդհատ բացել) ճեղքը դետեկտորի-սպեկտրոմետրի ֆոկուսացման և կարգաբերման համար:

Համապատասխանում է RoHS և CE-ին:

Տեխնիկական բնութագրեր

TTL մակարդակի էլեկտրական մուտքային ազդանշաններ - Տրիգերի #1 և #2 մուտքերը (TTL համատեղելի)՝ նվազագույն բարձր մակարդակը +2,0 VDC, առավելագույն ցածր մակարդակը՝ +0,8 VDC: Ակտիվ բարձր TTL մակարդակը վերահսկում է էլեկտրամեխանիկական ճեղքի բացումը: Իմպուլսի լայնությունը և կափարիչի ակտիվացման հաճախականությունը հետևում են այս ազդանշանի ակտիվ Բարձր մակարդակին:

Փականի ելքային գրգռման շարժիչ - փականի կոճի դիմադրությունը՝ 12 Ω նոմինալը, փականի բացման համար իմպուլսային լարումը՝ +48 VDC նոմինալը, փականը պահման լարումը՝ +5 VDC նոմինալը:

Մուտքային հզորության պահանջները - մուտքային գծի լարումը՝ 85–264 VAC շարունակական/ունիվերսալ, մուտքային գծի հաճախականությունը՝ 47–63 Հց, մուտքային հզորությունը՝ առավելագույնը 70-75 Վտ:

Մեխանիկական չափսեր - Չափերը (L $\times$ W $\times$ H). 7,24 դյույմ (18,4 սմ) $\times$ 4,50 դյույմ (11,4 սմ) $\times$ 3,15 դյույմ (8,00 սմ), քաշը՝ 1,3 կգ (2,9 ֆունտ)

Փականի կառավարման միավորի համար նախատեսված մալուխներ 2X SMB JACK 50 Ω RG174 6 FT և COAX 50 OHM BNC 48", AC Power Cord CEE 7/7 մինչև CEE-22 (220 V), CCD փականի խորհրդատվական և թվային ձևաչափի շահագործման ձեռնարկ:

Synapse CCD գլուխ

Ջերմաէլեկտրականորեն սառեցված մինչև -75°C՝ օգտագործելով E2V արտադրված, սպեկտրոսկոպիայի 1-ին աստիճան, 1024x256 պիքսել, ետևի ճառագայթման խորը Depleted CCD չիպ՝ 26սմ $\times$ 26սմ պիքսելներով և 26,6մմ $\times$ 6,6 մմ ընդհանուր ձևաչափով: Ներառում է USB մալուխ

Պահանջվում է կառավարման միավոր փականի կառավարման համար:

Synapse CCD համակարգ

Ջերմաէլեկտրականորեն սառեցված մինչև -60°C: Օգտագործում է Goodrich Sensors InGaAs անսահմանափակ սենսոր: 1024 պիքսել, 25-26 մկմ պիքսել քայլ, 500-505 մկմ բարձրություն:

Ալիքի երկարության միջակայքը 800nm-1700nm: Ներառում է USB մալուխ:

Ներառում է էներգամատակարարման բլոկ:

Ներքին CCD փական սպեկտրոմետրի առջևի մուտքի ճեղքի համար

Ներքին CCD փական սպեկտրոմետրի կողային մուտքի ճեղքի համար

Փեղկավոր MUX պահանջվում է, երբ օգտագործվում են երկու զանգվածային դետեկտորներ:

Ծրագրային ապահովում

EzSpec-SDK՝ ծրագրային ապահովման մշակման փաթեթ, որը նախատեսված է բաղադրիչները ինտեգրելու համար երրորդ կողմի հավելվածներում: Այն համատեղելի է Windows 10 և 11 64-բիթ օպերացիոն համակարգերի հետ, ինչպես նաև հետևյալ ծրագրավորման միջավայրերի՝ *Python *C++ *C# (.Net) *LabView [5700050903]:

Այն հնարավորություն է տալիս զարգացնել ծրագրեր ժամանակակից Windows օպերացիոն համակարգերի վրա և աջակցում է ավելի լայն ծրագրավորման լեզուների:

Բարձր ճշգրտությամբ հոսքային ժամանակաթվային փոխարկիչ (Time Tagger) – Հիմնական համակարգ

Հոսքային ժամանակաթվային փոխարկիչ սարքը նախատեսված են ժամանակի հետ փոխկապակցված մեկ ֆոտոններ հաշվելու, ժամանակային միջակայքերը չափելու, համընկնումները հաշվելու և այլն: Այն գրանցում է էլեկտրական իմպուլսների ճշգրիտ ժամանման պահը պիկովայրկյանային (պվ) կարգի ճշգրտությամբ՝ հնարավորություն տալով հետազոտողներին վերլուծել ազդանշանների ժամանակային կոռելյացիաները:

Կարևորագույն բնութագրերը.

Ժամանակի 4 կանալային հոսքային նմուշառման (tagging) համակարգ

RMS ջիտեր՝ 8-9 պվ ժամանակային լուծաչափ

Տվյալների փոխանցման արագություն՝ 90-92 Մնմուշ/վ USB 3.0-ով

Վերականգնման (dead) ժամանակ՝ 2.1-2.2 նվ

Պահեստային հիշողություն՝ 512 Մնմուշ

Մուտքային առավելագույն հաճախականություն՝ 475 ՄՀց

Մուտքային լարումների միջակայք՝ ± 3.3 Վ

Թրիգերի մակարդակի միջակայք՝ ± 2.5 Վ (համաժամեցվող)

Մուտքային դիմադրություն՝ 50-52 Ω

Մուտքային ազդանշանի թույլատրելի միջակայք՝ -5-ից 5 Վ

Նվազագույն իմպուլսի լայնություն՝ 500 պվ

Նվազագույն իմպուլսի բարձրություն՝ 100 մՎ:

Արտաքին ժամացույցի մուտք

Հաճախականություն՝ 10 կամ 500 ՄՀց

Կապակցում՝ AC, 50-52 Ω

Ամպլիտուդա՝ 1-ից 3 Վ գագաթից գագաթ (Vpp)

Ընդհանուր պարամետրեր

Չափսեր (Ե x Լ x Բ), մմ՝ 190-195 x 140-145 x 60-65

Ամբողջական ծրագրային փաթեթ

Անվճար ծրագրային ապահովման և ֆիրմային թարմացումներ

Լրացուցիչ մուտքային կանալներ (քանակ՝ 4)

RMS ջիտեր՝ 8-8.5 պվ ժամանակային լուծաչափ

Վերականգնման (dead) ժամանակ՝ 2.1-2.2 նվ

Մուտքային լարումների միջակայք՝ ± 3.3 Վ

Թրիգերի մակարդակի միջակայք՝ ± 2.5 Վ

Երաշխիքային ժամկետ՝ 1 տարի:

ԳՆՈՐԴ

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի

ՀՀ, ք. Երևան, Օրբելի 22

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Հ/Հ 900011045565

ՀՎՀՀ 02704199

Գլխավոր քարտուղարի պ/կ

Կ Ղարիբյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ

ք. Երևան, Ազատության 26/8

Ամերիաբանկ ՓԲԸ

ՀՀ 1570011489540100

ՀՎՀՀ 01210095

Տնօրեն

Ք. Թադևոսյան
(ստորագրություն)
Կ.Տ. 10095

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ


Ապրանքի																		
Չ/Հ	Միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման	Անվանումը	Չ/մ	Ընդհանուր քանակը	Վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝													
					I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	Ընդհանուր գինը	
1	35121341/508	Քվանտային օպտիկայի համալիր հավաքածու	լրակազմ	1	-	338,797,500.00	338,797,500.00	338,797,500.00	338,797,500.00	338,797,500.00	338,797,500.00	338,797,500.00	338,797,500.00	338,797,500.00	338,797,500.00	338,797,500.00	338,797,500.00	338,797,500.00
Ընդամենը՝					338,797,500.00													

*Գնման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները նախատեսված են Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի հրապարակած փոփոխված և լրացված գնման պլանի համապատասխան անվանատողերով: Վճարումը կիրականացվի ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվելու է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա:

ԳՆՈՐԴ

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի
ՀՀ, ք. Երևան, Օրբելի 22
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011045565
ՀՎՀՀ 02704199

Գլխավոր քարտուղարի պ/կ՝


Վ. Նալչիկյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ
ք. Երևան, Ազատության 26/8
Ամերիաբանկ ՓԲԸ
ՀՀ 1570011489540100
ՀՎՀՀ 01210095

Տնօրեն


Ք. Թադևոսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Պայմանագրի կողմ

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N _____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական անվանումը համառոտ չարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրի վճարման հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրի վճարման հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

ստորագրություն

ազգանուն, անուն

Կ.Տ.

Ապրանքը ընդունեց

ստորագրություն

ազգանուն, անուն

Կ.Տ.

ԱԿՏ N _____

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը _____ Վաճառողի
անվանումը _____

(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 _____ թ. _____-ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը _____

պայմանագրի համարը _____
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 2026թ. _____-ին հանձնման-ընդունման
նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն _____

Ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն _____

ստորագրություն

«___» _____ 2026թ. կնքված
ԲԿԳԿ-ԲՄԱՊԶԲ-25/53 ծածկագրով պայմանագրի

ԾԱՆՈԽՑՈՒՄ

_____ ֆինանսական գործակալի անվանումը _____ հայտնում է, որ .

1. _____ զնորդի անվանումը _____-ի և _____ վաճառողի անվանումը _____-ի միջև «--» _____ 2026թ. կնքված «-----/-----» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և

_____ վաճառողի անվանումը _____-ի միջև «--» _____ 2026թ-ին կնքվել է «-----» ծածկագրով ֆակտորինգի պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 8.12 կետով սահմանված պահանջներին:

_____ ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

_____ ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--» _____ 2026թ.